ՓԱՐԱՉ

ՀԱՅՐԵՆԵԱՑ

ՀԱՆԴԻՍ ՏԱՍՆՕՐԵԱՅ

Դ. ՏԱՐԻ 31 ՄԱՅԻՍ 1867 ԹԻՒ 3

ՀԱՆԴԻՍԻՍ պարբերական է 4 արծաթ Մէճիտ նախիւն վճարելի և վեցամսեան 2 Մէճիտ։ Ամբ Ամ յօդուածք յամ գրուելիան ուղղեալս է ի Սմիրնա—Ճապպէի թիւ 105 գրպարանը Հանդիսի գործակալ Գահրամանեան Գասպար աղային։ Դուռս երեալիս օրագրայ ճամբու ծախքը խմբագրին վրայ է։ Բաժանորդայ համար ծանուցումը յիր է։

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ազգի մը քաղաքակրթութեան աստիճանը կը հասկցուի ընդհանրապէս բարեպաշտական հաստատութիւններու քանակութենէն, անոնց ներքին ու արտաքին վիճակէն, փարչութեան, մատակարարութեան և բարեգործութեան ընթացքէն։

Դարձեալ բարեկամ մը կ'ըսեր «Ճամբորդութեանցս մէջ աւելի հետաքրքիր էի նախ գացած տեղիս ժողովուրդին քաղաքակրթութեան աստիճանը իմանալ. ուստի առաջին այցելութիւնս եկեղեցւոյ, անկելանոցի, դպրոցներու և հիւանդանոցի կընէի։

«Բարեպաշտութեան մասին Արևելեան քրիստոնեայ ազգերը առաջին ժողովուրդները են. իսկ քաղաքակրթութեան մէջ թէպէտ յետնորդ են տակաւին, բայց աղէկ յարմարութիւն և արագընթացութիւն ունին և Արևելեան հանճարը կրնայ մրցիլ Արևմտեանին հետ, եթէ մասնաւոր հոգ տարուի։ Վասն զի ընդհանրապէս աշխոյժ են այս ժողովուրդները, գործունեայ և խելացի»։

Ֆրանսացիի զաւկին Արևելեան քրիստոնեայ ազգերու համար ըրած այս յայտարարութիւնը Արևմտեան ուրիշ շատ երևելի ճամբորդներ (վուսյեաժէօր) ալ հաստատած են։

Յօդուածոյս նշանաբանը հոս չներկը յաւաջադիմական շարժումի և գաղափարաց վրայ խօսիլ. դառնանք ուրեմն մեր ձեռնարկած նիւթին, որուն վրայօք հասարակութեան մէջ աւելի կը խօսուի այսօրերը և նորակազմ Հոգաբարձութեան մ' առթիւ նոր և եռանդուն համակրութիւն մը կը նշմարենք։

Այդ համակրութիւնը զգացինք մենք ալ. որովհետև հիւանդանոցի նախկին տարապայման անձկութիւնը գիտէինք. գիտէինք նաև որ ազգային այս բարեպաշտական հաստատութիւնը շատ անգամ օրինաւոր վարչութիւններու ջանից և յատակագծերուն ընդդէմ մասնաւորաց ձեռքով արգելիչ վանդական ղօրութիւն մը դառնալով կ'զաղեցնէր անոնց միտքը և կը հոգնեցնէր և կը հարկադրէին հրաժարել իրենց պաշտօնէն։

Այս արգելքը բառնալու և հիւանդանոցի վիճակը բարւոքելու համար. այնպիսի միջոց մը հարկ էր, որ իր օրինաւորութեամբը գրաւէր նաև հասարակաց համակրութիւնը։

Ի՞նչ էր ուրեմն այդ. — հիւանդանոցի մատակարարութիւնը բաժնել կեդրոնական մասուկէն և նոյնէն բոլորովին անկախ ու անմիջապէս ժողովուրդին պատասխանատու հոգաբարձութեան մը խնամքին յանձնել։

Վերջին օրերու մէջ կազմուած նոր Հոգահարձութիւնը ահաւասիկ այս ընթացքով ձեռնարկեց իր պաշտօնին և հասարակաց կողմէ սիրալիր ընդունելութեան մ' արժանացաւ, և անոնք որ Կեդրոնական մասուկի դատարկութեանը հետ հիւանդանոցի տխուր վիճակը կ'ողբային, հարկաւ

փորձառութեան դաս մը առին այս պարագայիս մէջ. վասն զի երբ կառավարութիւն մը զատ և ժողովուրդը տարբեր կ'ըմբռնէ և կը խորհի, անտարակոյս բնականակար գործերու ամբոխութիւն մը կ'յաջորդէ, բայց բեղմնաւոր և արդասաբեր է ձեռնարկութիւն մը՝ մինչ նա հասարակաց հաւանութիւնի նկարագիրը կ'կրէ, և ահա անտարակոյս կարելի է յուսալ ազգային կազմակերպութիւն ու ընդարձակ ապագայ մը բաղդաւոր, գեղեցիկ և յաջող յոյսերով լի։

Հարցուր այս կենսական խնդիրը դարուս քաղաքակրթութիւնի պատմութեան և ահա դէպքերը կը բացատրեն քեզ մանրամասն և կը լուծեն, և անտարակոյս մեր ազգային ժողովոց Ս. Նախագահն ալ փոխանակ Կեղրոնական դատարկութիւնը ի զուր ողբալով Հրեստիոխանական ժողովին յուզում պատճառելու, ազգի սրտին վրայ իբրև անդարմանելի վերք մը ծանրացած սա կաթողիկոսական խնդիրները լուծելու գոնէ կ'զբաղի, որ Լիւքսէնպուրկի խնդրէն աւելի տևական եղան...։

Բայց մենք կրօնականը ձգելով (ինչու որ ատենը չ'է այս տեսակ միջնադարեան անհեթեթ խնդիրներով զբաղելու) հավանիրինք քիչ մը մեր մէջ տեսնուած նոր ու յանկարծական շարժումի մը առթիւ և աշխարհի ներկայ իրաց դէպքերէն մեր ազգին համար ալ գեղածիծաղ ապագայի ասողը հրամայելով բերկրենք գոնէ վայրկեան մը վասն զի "լացը միշտ լաց կը բերէ" կ'ըսէ հասարակաց առածը։

Մայիս 25 Համբարձման տօնին օրը անձամբ Ս. Փրկչի վանքը գացինք չ'է թէ հոն կատարուած հանդէսին ներկայ ըլլալու, այլ մանրամասն տեղեկանալու պատսպարելոց վիճակին, որ իրենց դիրքովը այսօր մեր ամենուս դթութիւնն ու կարեկցութիւնը կը հրաւիրեն։

Պատսպարանին ամեն մէկ յարկերը մասնաւոր ուշադրութեամբ դիտելով և պատսպարելոց իրենց վիճակին նկատմամբ առանձին հարցումներ ընելով գոհացուցիչ պատասխաններ ընդունեցինք և համոզուեցանք թէ նոր ակադեմ հոգաբարձութիւնը քիչ օրուան մէջ զգալի փոփոխութիւններ ներմուծեր է անդ։

Ակնատես եղանք որ հոգաբարձութեան անդամ պաշտօնատար Հայր, Տէր խոնարհ աշակերտը իր ձեռքը կը հագուեցներ դպրոցի աշակերտները և անձամբ կ'հսկէր անոնց։ Կարծես համոզուեցան այն օրը նոյն խեղճերը թէ իրենք ալ մարդկային ընկերութիւնի մէջ ծնունդ առնող արարածներ են։

Տեսանք այս ամենը, տեսաւ նաև ժողովուրդն ալ տեղւոյն նորամուտ բարեկարգութիւնը՝ որու դիմաց գծագրութենէն գոհունակութեան զուարթ յոյսեր յայտնի կը նշմարուէին։

Հիւանդանոցի պատուարժան Հոգաբարձութեան աշխոյժ եռանդը մեր սրտերուն մէջ նոր ու գեղեցիկ յոյսեր կ'արծարծէ. և վստահ ենք որ իր ձեռնարկութիւնը ազգին խիստ օգտակար ըլլալով պիտի բարձրացնէ գթութեան արժանի պատսպարելոց վիճակը մինչև այն աստիճանին, որ հիմնադիր Բարերարին վերջին կամքն է։

Կեցցէ՛ ուրեմն հիւանդանոցի Հոգաբարձութիւնը և կեցցէ՛ն այն ամեն Հայերը՝ որ օգտակարն ու գեղեցիկը քաջալերելու համար կ'աջակցին ազգին վստահութեանն ու համակրութեանը արժանի ազգային պաշտօնատարաց։

Հասարակաց եռանդուն համակրութիւնը մեր սակաւ գրուատիքներէն աւելի համարելով չենք ուզեր աւելի ներբողներ հիւսել, բայց կը խոստանանք Հոգաբարձութեան օգտակար տնօրէնութիւնները հրատարակել Հայրենեաց Օրէփիւռի միջոցաւ, որ հաճութիւն կ'զգայ իրեն հանրութեան շահաւէտ իրողութիւնները հասարակաց ծանօթացնել։

ՏԱՐԵԴԱՐՁ

Հայրենեաց Օրէփիւռը ուրախ է որ հակառակ տեսակ մը հնամոլ գաղափարներու վայրապար ջանիցը այս տարի ալ ազգային Սահմանադրութեան 7րդ Տարեդարձի հանդէսը ամենայն շքեղութեամբ կատարուեցաւ Հիւնքեարի դաշտին վրայ, յորում և կարծես ամեն տարի ազգայնութեան ոգին կ'ոգևորի ու կը կանաչանայ դալար և զուարթագեղ մարգերու նման. վասն զի այս տեսակ հրապարակային հանդէսներ երբեք առանց նշանակութիւնի չեն։

Մինչդեռ ազգային երիտասարդութիւնը Սահմանադրութեան սերը սրտին մէջ և անոր տարեդարձի տօնը Հիւնքեարի զուարթ փսանցը վրայ աշխուժիւ ու եռանդեամբ

կը տածէ ու փառաւորէ, Թող անդիէն խուսարարներն ալ ինչպէս որ կուզէ, սրբապ և կամի դժոխային խնդումով Սահմանադրութեան գամբանակաները երդէ. Նիւթամոլ հայը Թող ամէն բան իր նիւթական կենացը և շահուն վերաբերէ. Թող փիլիսոփայ լմատակը և անապարծ քաղաքագէտը հնամոլ գաղափարներու հինաւուրց ծգրած ու ժանգոտած արձագանքները կրկնելով՝ նախապաշարումի և մոլի եռանդին ոլորանա կարգան, խաւար ազգութեան կուռքը ջերմեռանդաբար պաշտեն և անոր առջև ծունր կրկնելով՝ խնկեն ու խնկարկեն։

Սոնց ամենքն ալ տկար ջանքեր են այն ընդհանուր շարժումի և յառաջադիմական գաղափարաց առջև, որք ամեն օր շարունակ աճումի գտնելու վրայ են, նման այն խորարմատ ծառին՝ որ ջրոց կողմէն անդադար ոստեր կ'արձակէ, կը ծլի և կը տարածի, և միշտ սերմ մը կը Թողու աշխարհի վրայ։

Ուռնաւոր ձեռք մը կրնայ մարդս շղթայի և գերութեան դատապարտել, հայրենի երկրէն բռնաբար վտարանդել զայն, անոր սիրելի առարկաները աչքի տեսութենէն հեռացնել և մինչև դահիճ մը ըլլալ անոր կենացը. բայց ոչ սկզբունքներն ու գաղափարները կրնայ հաշմել ու սպաննել ու ոչ ալ մարդուս մտաց ազատ ոգիմանը փակել և կաշկանդել. վասն զի ով կրնայ արգիլել մարդկային մտաց՝ որ չխորհի երբէք և չմտածէ։

Այն իրը՝ որու ծնունդը մարդկային մտաց արարչութիւնը չէ. չկրնար երբէք մարդս անոր վրայ իշխանութիւն բանեցնել, բռնանալ և անոր աճումը արգելուլ։

Յառաջադիմութեան գաղափարը մտային ընդհանուր պատերազմի շարժումն է, որ կը մրցի խաւար տգիտութեան ընդդէմ, և կը զարնէ, կը զարնուի, կը հալածէ և կը հալածուի, բայց վերջապէս կը յաղթէ հարկաւ. լուսոյ փայլակնց պէս կը շանթահարէ մարդկային մտաց անողոքելի դահիճը և անաչառ դատաւորի նման անոր մշնջենաւոր դատակնիքը կը վճռէ. վասն զի անյաղթ է, անպարտելի և խստաւոր զօրաւոր, և չկայ երբէք զօրութիւն մը՝ որ անոր առաջքն առնելու խլրտի, զինուի անոր ուժին դէմ և յամառի։

Սահմանադրական յեղաշրջումն ալ յառաջադիմական գաղափարին մէկ դեղեցիկ արդիւնքը ու անոր սքանչելի ծնունդն է և եթէ կը հալածուի սա երբեմն բռնաւոր ձեռքերէ, բայց անծնունդ չփոտիր երբէք ու չընչութեան մէջ, վասն զի արդարութեան կնիքը կը կրէ իր վրայ։

Պատերազմ Նաբոլէոն առաջինի շգեղ փառաց վերջին ասաղը կը մթագնէ. իսկ 1860 մայիս 24ը Հայոց վերածնութեան նախալոյսը կը ծնի։ Պ. Պոնապարտ շնորհալի վեհապետը իր բարձր հաւանութեամբը կը վաւերացնէ զայն և 1863 մարտ 27թուականը հակասահմանադրական հայերու վերջին Պատերազմն կը կործանէ պետական հարուածով և ահա այսպէս արդարութեան գահը վերստին յաղթական կը կանգնի։

1866 մարտ 20ը տկար և գուցէ վերջին փորձ մը ընելու կը ճգնի, բայց ահա ազգային երիտասարդութիւնը Սահմանադրութեան 7րդ Տարեդարձը այս տարի ալ փառաւորութեամբ տօնելով՝ քաղաքավարութեամբ կիմացնէ ի լուր աշխարհի թէ Սահմանադրութիւնը թէպէտ կը ննջէ, բայց ինք արթուն է, բայց ինք սահմանադրական է։

Կեցցէ՛ ուրեմն ազգային երիտասարդութիւնը, կեցցէ՛ ազգային Սահմանադրութիւն և կեցցեն ամեն անոնք՝ որ ազգային փառաց դափնիները իրենց քաղցր քրտինքներովը կ'երփնազարդեն։

Հայրենեաց Օրէրիւռը կը փութայ իր սրտագին բարեմաղթութիւններն ընելով՝ Սահմանադրութեան բարեյաջող և երջանիկ Տարեդարձ շնորհաւորել ամեն հեռաւոր և մերձաւոր Հայերու և հայցել ազգային գործերու յաջողութիւն վարժարաններու յառաջադիմութիւն և ամուլ մտքերու ընթափութիւն։

ՀՐԻՏԱԿ

Մեր նախորդ թուով երկու հրիտակներու նկատմամբ մէկ քանի խօսք ըրինք, որոց առաջինը Գալատեանի և երկրորդը իմ Հօրս մեծ Թագաւորեան Մանուել աղային կը վերաբերէին։

Այս երկուքն ալ տարիներէ 'ի վեր չգիտենք ինչ նկատմունքներով դեռ անգործադրելի մնացեր են, որոց համար, եթէ չենք սխալիր, ազգային ժողովոց Ս. Նախագահը մեծ պատասխանատուութիւն մը տակ կ'ենթարկի, մանաւանդ վերջինին նկատմամբ, որու գործադրութիւնը հրատարակին տիրոջ ան-

բովեան, Պաղտասար Աբովեան, Մ. Թաղիաթեան և Մ. Ղալանդեան կառավարութեան դէմ ապստամբներ էին։

Այսոր պատասխանը արդէն որուած է, այսինքն՝ 02։

Ի՞նչ էր ուրեմն այս անձերու անպատանալուն պատճառը.— . . . . . : Պատճառը ահա այս կէտերուն մէջ որոնէ։

Նշանակեալ այս՝ չորս անձերը իրենց եռանդուն հայրենասիրութեանը հետ միացուցած էին նաև իրենց վրայ այնպիսի պարգևներ, որոնցմով հասարակաց սիրոյն ու յարգանացը արժանի եղած են։ Իրենց աշխոյժ ուսումնասիրութեամբը Հայ գրականութեան մեծ ծառայութիւններ մատուցած ունին, և Աբովեան երկու հարազատները մանաւանդ իրենց կեանքը ազգային մանկտոյն միտքն ու սիրտը խնամելու և դաստիարակելու նուիրած են։

Հոս կ'արժէ որ Խաչատուր Աբովեանի համար Պ. Վակներ գերմանացի ճանապարհորդին գրածը ընդօրինակենք, որ նորա կեանցը վրայօք բաւական տեղեկութիւններ կ'պարունակէ։

«Այս ասոնցմէ վար չմնար նաև Պ. Աբովեանի հետ ըրած ճամբորդութիւնս, որն որ ազգաւ Հայ և իր կրթութիւնը Լայֆլանտի (՝ի Գերմանիա) մէջ առած էր։

«Այս մարդուս պատմութիւնը շատ հետաքրքրական է։

«Պ. Աբովեան Էջմիածնի վանքին միաբաններէն մէկին էր և քահանայական վիճակի որոշուած

«1820 ին Տորբատեան համալսարանին վարժապետ Պ. Բարբոդ՝ ի Հայաստան ըրած ճամբորդութեանը մէջ Էջմիածնայ վանքին ալ այցելութեան երթալով, Աբովեանը միայն գտնուեցաւ հոն, որ լաւ Ռուսերէն կը խօսէր։

«Պ. Բարբոդ աղաչեց զկաթողիկոսն որ այս երիտասարդ սարկաւագը իր ճամբորդութեանը ընկեր տայ, զինքաւ կաթողիկոսը և ընկերացան իրարու։

«Այս երկու ուղեկիցները եղբօր պէս իրարու հետ կապուեցան. ամեն վտանգներու և դժուարութեանց մէջ իրարմէ չէին բաժնուեր և այս մտերիմ բարեկամութիւնը մինչև Բարբոդին մահը տևեց։

«Պ. Աբովեան Բարբոդին գիտութիւնը տեսնելով իր սրտին մէջ ալ արծարծեցաւ գիտութեան եռանդը և աղաչեց զԲարբոդ որ զինքը Տորպատ (՝ի գերմանիա) ղրկելու միջոց մը գտնէ, որպէս զի այնտեղի հռչակաւոր համալսարանին մէջ աշակերտելով՝ իր սրտին ուշխոյժ փափագը լնու։

«Բարբոդին ջանքովն ու Ռուսիոյ կառավարութեան օժանդակութեամբը հասաւ իր փափագին և հոն վեց տարի շարունակ ուսման հետևելէ ետք՝ վերադարձաւ իր հայրենիքը, ուր իր հայրենակիցները զարգացնելու մեծ եռանդ ունէր։

«Հոն ուղեց վարժատուն դպրոց մը հաստատել, որու վախճանը պիտի ըլլար հասարակային դպրոցներու վարժապետներ հայցնել և այս միջոցը ապահով կերպ մը կը կարծէր իր ազգին յառաջադիմութեանն ու կրթութեանը։ Բայց երբ տեսաւ որ այս գիտաւորութիւնը պիտի չյաջողի, Էջմիածնայ մէջ քահանայացաւ տղոց վարպետ որոշուիլ ուզեց։

«Պ. Աբովեանի այս փափագն ալ շատ ընդդիմութիւն կրեց. որովհետև վանքին կղերը Պ. Աբովեանին Գերմանիոյ մէջ առած կրթութեանը վրայ կասկածեցաւ։

«Տեսնելով Պ. Աբովեան իր դէմ եղած այս անսովոր հալածումը՝ ՝ի Թիֆլիզ ուղևորեցաւ և հոն դպրոց մը հաստատելով տեղւոյն վարժարանը միացուց իրենին հետ։

Այս դպրոցը շատ անգամ աչքէ անցնելու գայլ և շատ զարմացայ Հայ տղոց յառաջադիմութեանը վրայ. որոնք սորվելու աղէկ յարմարութիւն և ընդունակութիւն ունէին։

«Տասը, տասնրչորս տարու տղաքներ կը կարդան ու կը գրէին Հայերէն, Վրացերէն, Թաթարերէն, Ռուսերէն Գերմաներէն ու Դաղլերէն։ Ստուգիւ շատ զարմացայ։ Գերմաներէն աղէկ շեշտելով կը խօսէին և վարպետին իմ առջևս գրել տուած բաներէն տեսայ որ Գերմաներէն լեզուին կազմութեանը աղէկ տեղեակ էին և իմ առջևս Կէթէին ու Շիլլերին գործքերը կարդացին։

«Մեն անգամ ես դպրոցը գալուս ու ես կայսեր տղաքը տեսնելուս՝ մեծ ուրախութիւն կ'զգայի. մանաւանդ իրենց բարեկամական վարմունքը, քաղաքավարութիւնն ու վարժութիւնը զիս չափազանց կ'ուրախացնէր։

«Իրենց վարպետին վրայ շատ սէր ունէին, որովհետև զիրենք թէ կրթութեան ու գիտութեան մէջ յառաջացնելուն թէ ի-

տարաբաղդ մայրը իր բաղկացը մէջ քնացնելու ատեն իր քունն ալ գալով՝ կողմնակի մահճակալին վրայ կ'երկնցայ, քիչ մը ատեն այսպէս քուն ըլլալէ ետք՝ կ'սթափի որ աղան նոր Լաքիմենիդէս մը գարձեր է։

Ամսասիկ անդգայշ մոր մը կէս ժամուան քունը անմեղ երախայի մը անբնական մահուամբը կը տաւժէ։

Այս երկու ըսբերս գուցէ քեզի համար այնչափ հաճելի չթուին, Խարեկամ; վասն զի սխալ են, բայց և այնպէս պակաս իրատական չեն նաև, ուստի կ'անցնեմ ջորրորդ նիւթիս, որ թէ քեզ հաճելի է և թէ գեղեցիկ սեռին ալ կրնայ ազդու դաս մը ըլլալ։

Մեր նախորդ տրամախօսութեան մէջ ինչպէս նշանակեցինք, գարնան ժամանակ ըլլալով՝ շաբերը գիւղեր զուարճութեան գացին։ Տ. Ա. ... ալ Ալէմտաղլիէն իր քոյրը կը հրաւիրէ մէկ քանի աւուր զուարճութեան, ուր ինքն անշուշտ բաւական զուարճացած ըլլալու է, բայց Տ. Ա. ... հետևեալ կերպով կը պատասխանէ։

«Սիրելի քոյր,

«Շնորհակալ եմ որ դիս Ալէմտաղլի զուարճութեան կը հրաւիրես, ատիկա առիս ունեցած սիրոյդ նոր ապացոյց մը կը համարիմ, բայց կը յաւելմ որ պիտի չկրնամ ընդունել քու հրաւերդ, վասն զի ես ալ այս տեղ ինձի խիստ հաճելի զուարճութիւններ ունիմ, զարս չեմ ուզեր այդ մէկ քանի աւուր զուարճութեան հետ փոխանակել։

«Իմ զուարճութիւնս, զաւակացս կրթութիւնն է և հարկ է որ ամեն մայր ալ իրեն համար ասանկ մտածէ, բայց ինչ որ է, այս տեսակ զուարճութիւնը ինձ համար շատ հաճելի է, և իմ զաւակացս կրթութիւնը յառաջ տանելու համար հազիւ թէ յարմար դասատու մը ձեռք ձգեցի, զոր գտնելու համար բաւական դժուարութիւն կրեցի, վասն զի գիւրութեամբ իմ զաւակացս կրթութիւնը չեմ կրնար ամեն վարժապետի անուն կրող վարժապետի յանձնել։

Ուստի կը յուսամ որ յառաջ բերած այս արդելքս բաւական մեծ ու իրաւացի պատճառ մը պիտի համարիս և քու հրաւերդ չընդունելուս համար զիս չպիտի մեղադրես։

14 Մայիս 1867 մնամ միշտ
խանդակաթ քոյրդ
ՈԳՈՒՀԻ

Այնիւ բարեկամ, ահաւասիկ մայր մը՝ որ իր զաւակաց կրթութիւնը իրեն համար զուարճութեան գեղեցիկ հաճոյք մը համարելով՝ գեղաշուարած Ալէմտաղլիի ուրախութեանցը հետ չուզեր փոխանակել։

Ի՞նչ կ'ըսես, բարեկամ, միթէ այս աղնիւ կինը գեղեցիկ սեռին մէկ նոր դիւցազնուհին չէ՞, որուն նմանը ներկային մէջ այնչափ դուռնուրեք է, որ իրաւամբ այս աղնուաղդի տիկինն ալ այն սակաւաթիւ բացառութիւններէն մին է, որ մեր զարմանքը կը գրաւեն։

Այս պանչելի մոր իրական հակապատկերները այնչափ շատ ու բազմաթիւ են, որոց ինչութեանը վրայ գաղափար մ'ունենալու համար հարկ է երևակայել միանգամ «Բանայիր» ըսուած զբօսավայրերը, յորում կնիկներն անշուշտ իրենց անհեթեթ ու անհաճոյ դիրքովն ու ձևերովը իրենք զիրենք մէյմէկ կատարեալ «Բանայիր»ներ կը հանդիսացընեն։

Մեր համեստութիւնը չ'ներեր այս տեսակ կնային նկարագիրներն ընծայել արամախօսութեանս մէջ Հայ բանասէրներու, որ անոնք ալ անշուշտ մեզի հետ համամտութեամբ կը դատապարտեն այս տեսակ «ՀԼԼԷԷ» զուարճութիւնները, որոց աղդած հրապոյրը խղճաւ անարժէք և պատուասէր անձերու արհամարհանացն արժանի է, ուստի և չարժէր աւելի խօսիլ այս տեսակ ստոր նիւթի մը վրայ։

Արդկային աղդի մէջ ամեն տեսակ ընկերութիւններ ամենքն ալ իրենց գեղեցիկ ու ազնիւ կողմերն ունին, գեղեցիկ սեռն ալ իր գեղեցիկ յատկութիւններն ու ազնիւ կողմը ունի, և այդ ալ իր ունեցած աւելի պճնասիրութիւնն է, որ գրեթէ փոխադրական ախտի պէս յորդւոց յորդի կը փոխանցի։

Սօսիսթի մը հաշուեցոյցը բաւական հետաքրքրական է և աւելորդ չ'ենք համարիր զայն ևս այս անգամ մեր տրամախօսութեան նիւթերէն մին ընել։

Ամսասիկ։
3500 ղ. ֆիստան,
1200 » շապկա
1300 » ամաղօն
6000 »

Ամսասիկ հաշիւ մը՝ զոր վճարելու համար բաւական քաջասրտութիւն հարկ է, վասն զի օդեղէն բանի մը համար այսչափ մեծկակ գումար մը վճարել, մեզի համար մահացու մեղքերուն տեսակէն մէկն է։

Ի՞նչ ընենք, Խարեկամ, մաքի և սրտի կրթութիւն չունեցող կին մը բաւական աղէկ անտեսագէտ չկրնար ըլլալ և ահա Պոլսի Հայուհի մը Եւրոպացի դքսուհիէ մը գրեթէ տարբերիլ չուզելով՝ առիթ տրուած է որ Եւրոպա իր ոչնչութիւնը Տաճկաստանի կուզակ ու կլորիկ ոսկիներուն հետ փոխանակէ։

Կնային այս պճնասիրութիւնն ու շռ-

ռայլութիւնը եթէ շատերու անանկութեան պատճառ եղած է ըսելու ըլլանք, հարկաւ չենք սխալիր. վասն զի անակնուելի բան մը չէ. իսկ ընտանեկան խառնվութիւններն ու կռիւները սովորական արարողութեանց կարգն անցած են, որոց գրեթէ խօսքն անգամ չըլլար։

Ասենք (ներէ բարեկամ, յիշողութիւնս աւելի սուր չըլլալուն տեղին անունը մոռցեր եմ)... մէջ կնային պարզասէր ընկերուհի մը լսեցինք, և ի՞նչ մեղքերնիս պահենք, շնտակը շատ ուրախացանք, բայց կարծենք թէ այս ալ այն բազմաթիւ ընկերուհիներուն նման առաւմ չկրցաւ ունենալ, և մենք ալ ընկերուհի ըլլալուն համար այնչափ աւելի վստահութիւն չցրցուցինք, վասն զի «փորձեալը կրկին փորձելը յիմարութիւն է» կ'ըսէ հասարակաց առածը։

Սէտէֆճեան էֆէնտիի հեղինակած Վարդան անուն ազգային ընտիր ողբերգութեան վրայ լսագիրներն արդէն արժանաւոր գովեստներ խօսեցան, որոց և մեք համամիտ կը դառնանք զմեզ, վասն զի չափազանցութիւններ չէին։

Այս հատընտիր ողբերգութիւնը 'ի Բերա Նաւմի Թատրոնին մէջ երեք անգամ շգեղ փառաւորութեամբ 'ի տես ներկայացաւ, մանաւանդ վերջինը, որ Պ. Ս. Լքշիեան մեծանուն նախկին դերասանապետը Վարդանի դերը կատարելով՝ աւելի ևս պատուաւոր ընդունելութիւն մը գտաւ հասարակութեան կողմէ։

Այս խաղը մայիս 27 շաբաթ գիշեր յիւսկիւտար Ազլզկէ Թատրոնին մէջ ալ ներկայացուեցաւ 'ի պատիւ Շրդ տարեդարձի Ազգային Սահմանադրութեան։

Այս անգամի հանդիսացման վրայ չենք կրնար աւելի խօսիլ. վասն զի 'ի բաց առեալ մէկ երկու դերասաններն ու դերասանուհիք, միւսները շատ յաջող չեղան իրենց դերերուն մէջ։

Կը յուսանք թէ դերասանական խումբը փոխանակ վնասութիւն համարելու իրեն մեր այս տողերը, քիչ մը աւելի մտադրութիւն կ'ընծայէ ներկայացման յաջողութեանը և Թատրոնին մէջ պատահած մէկ քանի մանր պակասութիւններուն, որ աւելի գաղէնի մը սրահի կը նմանէր։

Մնամ՝ քոյդ

Մ. Գ.

Գաղիացի ճանապարհորդ մը՝ որ ասկէ քանի մը տարի առաջ Կովկասեան գաւառները ճամբորդած է, Պ. Խ. Աբովեանի վրայոք հետևեալը կը գրէ։

«Պ. Աբովեանին հետ տեսութիւն ըրի և ստուգիւ զարմացայ իր հմտութեանը վրայ։

«Գերմանական փիլիսոփայութեան և գրագիտութեան առարկաները այնչափ իրեն ընտանի են, որ նայն իսկ Եւրոպացի մը կրնայ օգուտ քաղել իր 'կարծիքներէն։

«Շիլլերը ջուրի պէս գիտէ. Լէսինկին և Լէյպնիցին կարծիքները մաղէ անցուցեր է և իր Ասիական երևակայութիւնովն ա նոնց նոր գոյն մը կուտայ։

«Գերմաներէնը Գերմանացիի մը չափ կը խօսի և տարակոյս չկայ թէ այս անձը Հայ գրագիտութեան պատիւ պիտի ընէ օր մը։

«Տարօրինակ երևոյթ մարդկային մտայլուսաւորութեան. Հայու մը բերանը արձագանք եղած է այնպիսի վսեմ գաղափարներու, որք մեր մէջ դեռ նոր կը տարածուին։

«Շիլլերին և Լէսինկին դրութիւնները Կովկասի լեռներուն մէջ հաստատուին ու լսելի կ'ըլլան և դեռ Եւրոպայի մէջ ժողովուրդ կայ, որ այս հեղինակներու անունը անգամ լսած չէ։

«Օրմանալի բան պիտի ըլլայ եթէ Ասիայի լուսաւորութիւնը Կովկասէն սկսի և Բրամէթէին ժայռը տեսնէ իր չարչարանաց արդիւնքը...»։

Ահա Պ. Խ. Աբովեան ճշմարիտ Հայուն ուսումնական կենաց մէկ համառօտ նկարագիրը, զոր կ'ընծայեն մեզ Եւրոպացի երևելի ճանապարհորդներ։

Պ. Աբովեան իբրև գրագէտ շատ բաներ գրած ունի, որոնցմէ մին է «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» անուն գիրքը, յորում՝ երկու արժէք կը նշմարուի, այսինքն՝ բանասիրական (փիլոլոժիք) և ազգային։

Լեզուն թէև Կովկասեան Հայու լեզու է, բայց մութ ու դժուարիմաց չէ այնչափ։

Պ. Աբովեան այնպիսի երկրի մը մէջ ծառայած է իր ազգին, յորում բռնութիւնը, խաւար տգիտութիւնը և մոլեռանդը մեծ ազդեցութիւն ունին ժողովուրդին մտայն ու կրթութեանը վրայ։

Մտադիր կը հաւանինք Մ. Նալբանդեանի կենաց նկարագիրն ալ ընծայել յարմար առթիւ մը մեր սիրելի ազգայնոց և հրապարակել անոր մէկ քանի գրուածքները որ անշուշտ հաճելի է զինքը սիրող բոլոր բարեկամացը, որն որ ամբողջ հասարակութեան ճշմարիտ բարեկամն էր։

ՏՆՕՐԷՆ = ԽՄԲԱԳԻՐ
ՄԻՆԱՍ Մ. Հ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ